«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ
հեռ.՝ 010 55 15 15
էլ.փոստ՝ info@gladzoruco.am
կայք՝ www.gladzoruco.am
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Չարենցի 1բ N42

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով «_____»-ը
իրավաբանական անձի անվանում

(այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն՝_____-ի
անուն, ազգանուն

տալիս է իր համաձայնությունը, որ «Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հետ ունեցած իրավահարաբերությունների ամբողջ ընթացքում, այդ թվում՝ մինչև Ընկերության հետ գործարար իրավահարաբերության մեջ մտնելը՝ սկսած սույն համաձայնության ստորագրման պահից, Ընկերությունը հարցումներ կատարի «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին և վերջիններիս խնդրում է Ընկերությանը տրամադրել իր ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների, աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք Ընկերության կողմից կարող են հաշվի առնվել իր հետ վարկային, փոխառության, երաշխավորության, գրավի և այլ պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) կնքելու վերաբերյալ որոշում կայացնելիս, ինչպես նաև Պայմանագիր կնքելու դեպքում, Պայմանագրի գործողության ողջ ընթացքում, ցանկացած պահի համապատասխան տվյալներ մշակող վերոնշյալ սուբյեկտները Ընկերության կողմից մարքեթինգային և/կամ նոր վարկի տրամադրման վերաբերյալ առաջարկներ կատարելու նպատակով Ընկերությանը տրամադրեն իր ֆինանսական պարտավորությունների, աշխատանքային գործունեության վերաբերյալ տվյալներ:

Կազմակերպությունը միաժամանակ տալիս է իր համաձայնությունը Ընկերությանը պայմանագրային հարաբերությունների ողջ ընթացքում կատարելու հետևյալ գործողությունները՝

1. Ընկերության կողմից Պայմանագիր կնքելու դեպքում, ցանկացած պահի, առանց Կազմակերպությանը նախապես տեղյակ պահելու ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին և «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին տրամադրել իր ֆինանսական պարտավորությունների մասին տեղեկություններ:
2. Մշակել, այդ թվում հավաքագրել, մուտքագրել, համակարգել, պահպանել, վերականգնել, վերափոխել, փոխանցել, տրամադրել, ուղղել, ոչնչացնել, օգտագործել Կամակերպությանը վերաբերվող տվյալներն ու տեղեկությունները, վերջինիս նույնականացնելու, վարկային հայտի ուսումնասիրության ընթացքում որոշումներ կայացնելու, Կազմակերպության վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով:

Վերոնշյալ տեղեկություններն Ընկերությունը կարող է հավաքագրել միայն իրավաչափ եղանակով, ինչպես անմիջապես հաճախորդից, այնպես էլ օրենքով չարգելված այլ տեղեկատվական աբյուրներից:

3. Կատարել հարցումներ, ստանալ, ապա մշակել Կազմակերպության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ հետևյալ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստր, ՀՀ ճանապարհային ոստիկանություն, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստր, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն, ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն, ՀՀ պետական եկամուտների կոմիտե, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ, որոնք անհրաժեշտ կլինեն Ընկերության

«Գլաձոր ՈւՎԿ» ՓԲԸ
հեռ.՝ 010 55 15 15
էլ.փոստ՝ info@gladzoruco.am
կայք՝ www.gladzoruco.am
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Չարենցի 1բ N42

կողմից վարկային հայտը դիտարկելու, Պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնելու, Կազմակերպության վարկունակունակության գնահատման համար:

4. Ընկերությունը սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով Կազմակերպությանը պատկանող գույքերի վերաբերյալ հարցում կատարի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ստանա սպառիչ տեղեկություն իր գույքային իրավունքների, այդ թվում՝ դրանց ծագման հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև կադաստրային գործից ստանա սեփականության իրավունքի վկայականի, հատակագծի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճեններ:

Կազմակերպության անունից դիմում ներկայացնի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, կատարի անշարժ գույքի նկատմամբ ցանկացած իրավունքի պետական գրանցում, ստանա փաստաթղթեր, կատարի վճարումներ՝ մինչ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների լրիվ կատարումը:

5. Ընկերությունը սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով Կազմակերպությանը պատկանող տրասպորտային միջոցների վերաբերյալ հարցում կատարի ՀՀ ճանապարհային ոստիկանություն և ստանա սպառիչ տեղեկություն տրանսպորտային միջոցների նկատմամբ իմ գույքային իրավունքների, այդ թվում՝ դրանց ծագման հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև ստանա սեփականության իրավունքի վկայականի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճեններ՝ մինչ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների լրիվ կատարումը:

6. Ընկերության հետ ունեցած իրավահարաբերությունների ամբողջ ընթացքում, այդ թվում՝ մինչև Ընկերության հետ գործարար իրավահարաբերության մեջ մտնելը՝ սկսած սույն համաձայնության ստորագրման պահից Ընկերությունն Կազմակերպության ներկայացուցչին և/կամ լիազորված անձին նկարահանի, տեսաձայնագրի և ձայնագրի՝ ցանկացած իրավաչափ միջոցով:

Կազմակերպությունը գիտակցում է, որ վերոնշյալ նկարահանման, տեսաձայնագրման ու ձայնագրման միջոցով ստացված նյութերը պարունակում են անձնական տվյալներ և տալիս է իր համաձայնությունը, որ վերոգրյալ տվյալները մշակվեն Ընկերության կողմից՝ սույն համաձայնությամբ սահմանված կարգով:

Կազմակերպությունը գիտակցում է, որ տրամադրված տեղեկությունները և տվյալները, կախված դրանց բովանդակությունից, կարող են ազդել Ընկերության կողմից կայացված համապատասխան որոշման վրա:

Կազմակերպությունը սույնով հավաստում է, որ նախքան սույն համաձայնությունը տալը, իրեն մանրամասն բացատրվել է վարկային պատմության և վարկային սքոր գնահատականի էությունը, դրանց կարևորությունը, ծանոթացել է կիրառվող սքորի տեսակներին, սքորի վրա ազդող գործոններին և տեղեկացված է, որ ստորև աղյուսակում նկարագրված «ԱԲՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին կատարվող հարցումները կարող են ազդեցություն ունենալ իր վարկային գնահատականի (սքորի /օրինակ՝ «Ֆայկո» սքոր/) վրա.

Վարկային հարցման նպատակ	**Ազդեցությունը վարկային գնահատականի վրա**	**Հարցման հաճախականություն**	**Ժամկետ**
Նոր վարկային դիմում	նվազեցնում է	մեկանգամյա	նոր վարկային հայտ ներկայացնելիս
Գործող վարկի մոնիտորինգ	չի ազդում	պարբերաբար	վարկային պայմանագրի գործողության ընթացքում

«Գլաձոր ՈՒՎԿ» ՓԲԸ
հեռ.՝ 010 55 15 15
էլ.փոստ՝ info@gladzoruco.am
կայք՝ www.gladzoruco.am
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Չարենցի 1բ N42

Երաշխավոր անձ (նոր վարկային դիմում)	նվազեցնում է	մեկանգամյա	նոր վարկային հայտ ներկայացնելիս
Երաշխավոր անձ (գործող վարկ)	չի ազդում	պարբերաբար	վարկային պայմանագրի գործողության ընթացքում
Երաշխավոր անձ (գործող երաշխավորի մոնիտորինգ)	չի ազդում	պարբերաբար	վարկային պայմանագրի գործողության ընթացքում
Փոխկապակցված անձ	չի ազդում	մեկանգամյա	նոր վարկային հայտ ներկայացնելիս
Աղյուսակում ներառված հարցումների համաձայնությունը պարտադիր է վարկի տրամադրման հայտի ուսումնասիրության և գործող վարկային պայմանագրի շրջանակում մոնիտորինգի իրականացման համար, ինչպես նաև երրորդ անձանց նկատմամբ պարտավորություններ ստանձնելու (երաշխավոր, համավարկառու, գրավատու և այլն) վերաբերյալ հայտերի դիտարկման և վերջիններիս հաստատման արդյունքում կնքված պայմանագրերի գործողության ընթացքում մոնիտորինգի իրականացման համար:			

Սույն համաձայնությունը Կազմակերպության անունից կարդացել է և հավաստում է, որ այն կազմակերպության համար լիովին հասկանալի և ընդունելի է՝

_____

պաշտոն, անուն, ազգանուն, հայրանուն

Իրավաբանական անձի ՀՎՀՀ՝_____

Ստորագրություն՝_____

Ամսաթիվ՝ _____

օր/ամիս/տարեթիվ